Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Արարատի մարզի Ոսկետափի հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Անգլերեն

Թեմա՝ Բուլինգի դրսևորումները դպրոցահասակ երեխաների շրջանում

Վերապատրաստող, մենթոր՝ Կարինե Ավետիսյան

Ուսուցիչ՝ Դավթյան Լիլիթ

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 1

Ինչ է բոիլինգը 6

Ինչպե՞ս հասկանալ, որ երեխան ենթարկվում է բուլինգի: 10

Դպրոցական բուլինգի զոհերի առանձնահատկությունները: 10

Բուլինգի հանդեպ հակվածություն ունեցող երեխաներ: Բուլինգի ենթարկող երեխաներ 12

Արտաքին գործոններ 12

Դպրոցական բուլինգի հետեվանքները 14

Ինչպես կանխարգելել բուլինգը 14

Ինչպե՞ս ծնողը կանխարգելի իր երեխայի հանդեպ իրականացվող բուլինգը 16

Եզրակացություն 17

Օգտագործված գրականություն 19

Ներածություն

Բուլինգը անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամաբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցիալ:

Բուլինգ անձի կամ անձանց կողմից իրականացվող անցանկալի ագրեսիվ վարքագիծն է, որը ներառում է տեսանելի կամ ընկալելի ուժային անհավասարություն և բազմիցս կարող է կրկնվել, կամ, ամենայն հավանականությամբ կկրկնվի: Բուլինգը կարող է սթրես կամ վնաս պատճառել թիրախավորված անձին, ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, ինչպես նաև՝ կրթական վնաս:

Տարբերում ենք բուլլինգի տարբեր դրսևորումներ՝

- ✓ ֆիզիկական՝ հարվածել, հրել, վնասել,
- ✓ խոսքային՝ ծաղրել, պիտակավորել, սպառնալ, վիրավորել,
- ✓ հոգեբանական կամ սոցիալական՝ դիտավորյալ խմբից վտարել կամ մեկուսացնել, վարկաբեկել, վախեցնել,
- ✓ սեռական՝ բռնի գործողություններ, հարձակումներ,
- ✓ կիբեր՝ կիբերսադրանք՝ տեքստային հաղորդագրություններ, սպառնալիքներ, անպարկեշտ նկարների տեղադրում համացանցում և այլն:

Բուլլինգի շարժառիթները տարբեր են, որոնց թվին կարող ենք դասել ինքնահաստատվելը, դրական տպավորություն թողնելը, ուժեղ երևալը և այլն, որոնք տարիքային տարբեր շրջաբաժանումներում տարբեր դրսևորումներ ունեն: Խոսքը հիմնականում այն երեխաների մասին է (բուլլեր), որոնք մշտապես ձգտում են ուրիշների հանդեպ իշխանություն կամ վերահսկողություն ձեռք բերել և հիմնականում այն ընտանիքներից են, որոնցում հաճախ են կիրառվում ֆիզիկական պատիժներ, և ցանկացած խնդրի լուծում ավարտվում է բռնությամբ:

Ժամանակակից դպրոցում ձևավորվող սոցիալական պաշտպանության ու սոցիալական գիտակցության վրա ազդող գործոնների շրջանակը ընդգրկուն է՝ ներառելով ինչպես երեխաների սոցիալական տարբեր կարգավիճակները, անհավասար ֆիզիկական ու մտավոր հնարավորությունները, օտարածին մշակութային բարքերը, այնպես էլ ուսուցիչների մանկավարժական պատրաստվածությունը, հատկապես տարիքային մանկավարժության և հոգեբանության վերաբերյալ գիտելիքների մակարդակը, կարծրատիպային մոտեցումները և այլն: «Կրթությունը ոչ միայն որոշակի մակարդակի գիտելիքներ ստանալու միջոց է, այլև սոցիալական և անհատական զարգացման վճռորոշ գործոն, մարդկանց իդեալներին, ազատությանն ու արդարությանը անհրաժեշտ բաղկացուցիչ, մարդու համակողմանի

զարգացմանը նպաստող հիմնական միջոց, որը կտանի աղքատության, խտրականության, տգիտության, մարդկանց կեղեքման մակարդակի կրճատման....»



Դպրոցը կարևոր սոցիալականացման օղակ է, որտեղ ձևավորվում են սեփական անձի, կյանքի նպատակների և աշխարհի մասին պատկերացումները: Այս առումով, հանրակրթության որակը ոչ միայն կրթության հասանելիությունը, բովանդակությունը և պատշաճ նյութատեխնիկական բազայի առկայությունն է, այլև անվտանգ հոգեբանական միջավայրը, որտեղ աշակերտը զերծ է ցանկացած բռնությունից և հնարավորությու ունի լիարժեք օգտագործել իր անձի զարգացման այդ կարևոր տարիները: Եվ եթե ֆիզիկական բռնությունը ավելի տեսանելի և դատապարտելի է, ապա սոցիալ- հոգեբանական բռնության բազմաթիվ դրսևորումներ (ծաղր, բամբասանքներ, վիրավորանք, հայհոյախոսություն, պիտակավորում, կոպտախոսություն և այլն), որոնք միավորվել են bullying տերմինի ներքո: Ավելի քիչ դատապարտելի են հասարակության կողմից, ավելի դժվար չափելի են, իսկ բացահայտման և կանխարգելման մեխանիզմները թե՛ օրենսդրական ակտերի բովանդակության, թե՛ դրանց կիրառման մակարդակում սահմանված չեն:

Save the Children-ի և World Vision –ի կողմից 2017 թ. -ի Հայաստանում իրականացված «Երեխաների կարծիքով» հետազոտության տվյալների համաձայն , միջին դասարանների աշակերտների 40% -ը շաբաթական 1-5 անգամ դպրոցում ականատես է լինում ծաղրի կամ կռվարար պահվածքի ։

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2018 թ. հրապարակած տվյալների՝ աշխարհում 13-15 տարեկան երեխաների գրեթե կեսը՝ շուրջ 150 միլիոն երեխա, դպրոցում կամ դպրոցի տարածքում ենթարկվել է բռնության: 2019 թ. հուլիսի 25-ին Հայաստանում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ մեկտեղ կազմակերպել է երեխաների մասնակցությամբ «Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման և արձագանքման գործողությունները» խորագրով քննարկում, որի ընթացքում երեխաները բարձրաձայնել են խնդրի հետ կապված իրենց պատկերացումները, մշակել, ներկայացրել առաջարկություններ և թե ինչ գործողություններ կձեռնարկեն բռնության կանխարգելման, բռնությունից տուժած երեխաներին օգնելու համար՝ կարևորելով պետության, հասարակության արձագանքը երևույթի նկատմամբ: Հայաստանում չկան վիճակագրական տվյալներն այն մասին, թե դպրոցում ուսումնական տարվա կտրվածքով քանի երեխա է հասակակցի կողմից ենթարկվում բուլլինգի: Այն հաճախ չի դիտարկվում որպես խնդիր, այլ համարվում է նորմալ երևույթ: Ավելին, հաճախ բռնության դրսևորումները չեն հակադարձվում՝ քողարկելով իրական խնդիրը և բարդելով այն դեռահասության ճգնաժամի ու հույզերի չկառավարման վրա: Մինչդեռ երևույթը կա, և դեռևս ուշադրություն չի դարձվում այդ խնդրին, չեն թիրախավորվում այն խմբերը, որոնք հաճախ են բուլլինգի զոհ դառնում:

Բուլլինգն անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է՝ հետապնդումը, հոգեբանական տեռորը, բռնությունը, հեգնանքը, ծաղրանքը: Այն կարող է տեղի ունենալ ցանկացած խմբում, բայց առավել վտանգավոր է դպրոցականների շրջանում: Հիմնականում բուլլինգի զոհ են դառնում շրջապատում իրենց տեղը ոչ ամբողջությամբ գտած անձինք, որոնք ինչ-որ առումներով խոցելի են կամ ունեն որոշակի թերություններ: Հիմնականում այս երեխաները ներփակված են իրենց ապրումներով, չեն հաղորդակցվում շրջապատի հետ: Բուլլինգը չի սահմանափակվում զոհի ու ագրեսորի դերերով: Բուլլինգի գործընթացում առանձնացվում է չորս դեր՝ ագրեսոր, մասնակից, դիտորդ և պաշտպան: Հատկապես առանձնացվում է դիտորդի դերը, առանց որի ներկայության սովորաբար բուլլիգ տեղի չի ունենում: Մասնավորապես, երբ գործ ունենք ծաղր պարունակող հոգեբանական ճնշման իրավիճակի հետ, կարող ենք փաստել, որ այլ անձի ներկայությունը ծաղրողի համար լինում է խիստ ցանկալի: Այդ անձը կարող է պասիվ դիտորդի դերում հանդես գալ, բայց և միաժամանակ նպաստել բացասական վարքի դրսևորմանը: Դիտորդ երեխաները հաճախ վախենում են զոհ դառնալուց կամ առանձին դեպքերում զվարճալի են համարում բուլլինգի տեսարանը, փորձում լավ հարաբերություններ ունենալ բուլլերի հետ՝ վախենալով դառնալ հերթական զոհը:

ԻՆՉ Է ԲՈՒԼԻՆԳԸ

Բուլինգը /նվաստացում, հալածանք/ որևէ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրումն է այլ անձի նկատմամբ, որը կրում է շարունակական բնույթ և կարող է ֆիզիկական կամ էմոցիոնալ վնաս հասցնել անձին:

«Բուլինգ» տերմինն առաջին անգամ գործածվել է 1530 թվականից՝ սկզբնապես նշանակելով «սիրելի», ապա տարբեր ձևափոխություններից հետո, իր ներկայիս իմաստը ստացել է 1710 թվականից:

Բուլինգի կարող են ենթարկվել բոլորը, ովքեր փոքր ինչ տարբերվում են մեծամասնությունից: Տարբերությունները կարող են լինել ցանկացած տեսակի, անգամ ամենադրական տարբերությունների պարագայում, օրինակ, եթե երեխան դասարանում ամենախելացին է, ամենագեղեցիկը, ամենաապահովված ընտանիքից, ամենասիրելին ուսուցիչների կողմից, ինչպես նաև “օբյեկտիվ” տարբերությունների պարագայում՝ օտարազգի կամ օտարալեզու լինելը, բարձր կամ ցածր հասակը, ֆիզիկական ինչ-որ տարբերությունը: Կամ որոշակի բացասական տարբերությունների պարագայում, օրինակ, եթե երեխան չի հետևում անձնական հիգիենային, եթե չափազանց ագրեսիվ կամ էմոցիոնալ է, եթե երեխան առանց որևէ ֆիզիկական խնդրի պարզապես չափազանց թուլակազմ է, կամ դասերին միշտ ներկայանում է չափազանց վատ պատրաստված…



Բուլինգի ենթարկվող անձը համարվում է բուլիինգի զոհ, իսկ բուլիինգի ենթարկող անձին համարում են բուլեր։ Բուլիինգը բաժանվում է մի քանի տեսակների՝

- *Վերբալ կամ խոսքային բուլինգ*
- *Կիբեր բուլինգ*
- *Ֆիզիկական բուլինգ*
- *Սոցիալական բուլինգ*

Վերբալ կամ խոսքային բուլինգը որը նաև անվանում են ***հուզական բուլինգ,*** բնութագրվում է խոսքի միջոցով վիրավորանքներ, սպառնալիքներ արտահայտող բառերով, որոնք դրսևորվում են արտաքին տեսքի, սեռականության, էթնիկ պատկանելիության, հաշմանդամության վերաբերյալ՝ կատակների, ոչ պատշաճ արտահայտությունների տեսքով:

Կիբեր բուլինգը բուլլինգի տեսակ է, որը իրականացվում է սոցիալական լրատվամիջոցների և նոր տեխնոլոգիաների միջոցով: Ինչպես բուլլինգի բոլոր տեսակների դեպքում, այս տեսակի փոխազդեցությունը հիմնված է դիտավորյալ մեկ այլ անձի վնասելուն կամ հետապնդելուն:

Ֆիզիկական բուլինգը ենթադրում է ֆիզիկական ուժի կիրառում աշակերտի նկատմամբ, որի արդյունքում երեխան կարող է ֆիզիկական տրավմա ստանալ: Ֆիզիկական բռնություն է համարվում ծեծը, հարված հասցնելը, ապտակը, իրերը վերցնելը կամ փչացնելը և այլն: Սովորաբար ֆիզիկական և հուզական բռնությունները զուգակցվում են: Ծաղրանքները կարող են շարունակվել երկար ժամանակ՝ զոհի մոտ առաջացնելով երկարատև տրավմատիկ ապրումներ:



Սոցիալական Բուլինգ: Երեխաներն ու դեռահասները դիմում են բուլինգի, քանի որ դա ռազմավարություն է, որը նրանց կարծիքով, կարող է օգնել նրանց բավարարել իրենց սոցիալական ընդունման, ինքնավստահության, հարգանքի և անվտանգության կարիքները: Սոցիալական բուլիինգի ժամանակ երեխային հարկադրաբար ստիպուն են, որպեսզի նա չմասնակցի սոցիալական կյանքին, օրինակ եթե երեխան ունի բարձր առաջադիմություն սպորտում, կարող են հասակակիցները թույլ չտալ, որ երեխան մասնակցի մրցումների:

Դպրոցական բուլինգը բռնության տարատեսակ է, որի դեպքում ուսուցիչների (կամ աշակերտների) կողմից <<ուժ>> է կիրառվում աշակերտների նկատմամբ կամ, ինչը պատահում է չափազանց հազվադեպ, աշակերտների կողմից ուժ է կիրառվում ուսուցչի նկատմամբ: Այն կարող է լինել հուզական և ֆիզիկական բնույթի: **[Միքայելյան Մ. Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան2016թ.]:**

ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՍԿԱՆԱԼ, ՈՐ ԵՐԵԽԱՆ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ԲՈՒԼԻՆԳԻ

- Երեխան դպրոցից վերադառնում է անտրամադիր, գնալով պակասում են ընկերները:
- Երեխան չի ցանկանում գնալ դպրոց, հաճախ ասում է, որ հիվանդ է կամ լավ չի զգում:
- Երեխան հաճախ տուն է գալիս կեղտոտված հագուստով, պայուսակով, քերծվածքներով:
- Երեխայի մոտից հաճախ իրեր են կորում, հնարավոր է դրանք իրենից խլում են:
- Երեխան չի ցանկանում սովորել կոնկրետ առարկա, կամ գնալ այդ դասին, հնարավոր է երեխան բուլիինգի է ենթարկվում ուսուցչի կողմից:
- Երեխան չի ուզում մասնակցել էքսկուրսիաների, դասարանցիների ծննդյան միջոցառումներին:

Այս բոլոր դեպքերում ծնողը պետք է առավել ուշադիր լինի:

Դպրոցական բուլինգի զոհերի առանձնահատկությունները

Դպրոցական բուլինգի զոհ կարող է դառնալ ցանկացած երեխա, սակայն սովորաբար ընտրվում են այնպիսիները, ովքեր թույլ են կամ ինչ-որ բանով տարբերվում են ուրիշներից: Համաձայն Ն.Օ. Զինովևայի և Ն.Ֆ. Միխայլովայի՝ առավել հաճախ դպրոցական բուլլինգի զոհ են դառնում այն երեխաները, ***ովքեր ունեն հետևյալ առանձնահատկությունները.***

- ***Ֆիզիկական թերություններ***՝ ակնոցների կրում, թույլ լսողություն, շարժողական խանգարումներ (օրինակ՝ ՄՈՒԿ), այսինքն՝ նրանք, ովքեր չեն կարող պաշտպանել իրենց:
- ***Վարքային առանձնահատկություններ***՝ ինքնամփոփ (ինտրովերտ) կամ իմպուլսիվ վարքագծով երեխաներ: Սովորաբար գերակտիվ երեխաները չափազանց “կպչուն” են, բայց միևնույն ժամանակ ավելի միամիտ և անմիջական են, քան իրենց հասակակիցները: Նրանք հաճախ մտնում են այլ երեխաների և մեծահասակների անձնական տարածք, խառնվում են ուրիշների խոսակցությանը, խաղերին, անհամբեր են, ուրիշի վզին են փաթաթում սեփական կարծիքը: Այդ պատճառով էլ գերակտիվ երեխաները հարուցում

են շրջապատողների զայրույթը և նրանց կողմից սովորաբար ”պատասխան հարված” են ստանում: Գերակտիվ երեխաները կարող են լինել ինչպես զոհեր, այնպես բռնացողներ, կամ էլ՝ երկուսը միաժամանակ:

- ***Արտաքին առանձնահատկություններ***՝ շիկակարմիր մազեր, պեպեններ, դուրս ցցված ականջներ, ծուռ ոտքեր, գլխի յուրահատուկ ձև, գիրություն կամ չափազանց նիհարություն և այլն:
- ***Չզարգացած սոցիալական հմտություններ***՝ կան երեխաներ, ում մոտ վերբալ և ֆիզիկական բռնության նկատմամբ հոգեբանական պաշտպանությունը զարգացած չէ, քանի որ նրանց հաղորդակցման ու ինքնարտահայտման փորձն անբավարար է: Հետևաբար, այս երեխաներն ավելի հեշտ են ընդունում զոհի դերը, քան իրենց այն հասակակիցները, որոնց սոցիալական հմտությունները զարգացած են: Զոհի դերն ընդունողը համակերպվում է իրավիճակի հետ՝ համարելով այն անխուսափելի, ավելին, հաճախ նույնիսկ փորձում է արդարացնել բռնացողին՝ մտածելով.” Երևի ես արժանի եմ հենց այս վերաբերմունքին”:
- ***Վախ դպրոցի հանդեպ***՝հանդիպում է այն երեխաների մոտ, ովքեր դպրոց են հաճախում բացասական սոցիալական սպասումներով: Երբեմն վախը գալիս է ծնողներից, ովքեր ժամանակին խնդիրներ են ունեցել դպրոցում: Վախի առաջացման պատճառ կարող են հանդիսանալ չար ուսուցչի և վատ գնահատականների մասին պատմությունները: Դպրոցի հանդեպ վախ և անհանգստություն ունեցող երեխան ավելի հեշտ է դառնում համադասարանցիների ”թիրախը”:
- ***Կոլեկտիվային կյանքի փորձառության բացակայություն*** (տնական երեխաներ)՝ նախադպրոցական մանկական հաստատություններ չհաճախած երեխաները սովորաբար հաղորդակցման մեջ ծագող խնդիրները հաղթահարելու անհրաժեշտ հմտություններ չեն ունենում՝ չնայած այն բանին, որ իրենց բազմագիտակությամբ (էրուդիցիա) հաճախ գերազանցում են հասակակիցներին:
- ***Հիվանդություններ***՝գոյություն ունեն բազմաթիվ խանգարումներ, որոնք ծաղրի առարկա են դառնում հասակակիցների կողմից՝ էպիլեպսիա, տիկեր, հիպերկինեզներ, գիշերամիզություն կամ անմիզապահություն (էնուրեզ), անկողնաքապահություն (էնկոպրեզ), խոսքի խանգարումներ՝ թլվատություն կամ կակազություն (դիսլալիա), գրավոր խոսքի խանգարում (դիսգրաֆիա), ընթերցանության խանգարում (դիսլեքսիա), հաշվելու ունակության խանգարում (դիսկալկուլիա) և այլն:
- ***Ցածր ինտելեկտ և դժվարություններ ուսման մեջ***՝թույլ ընդունակությունները երեխայի ցածր առաջադիմության պատճառ են հանդիսանում, ինչի հետևանքով էլ ձևավորվում է ցածր ինքնագնահատական: Երեխան մտածում է. ”Ես դա չեմ կարող անել, ես մյուսներից վատն եմ”: Ցածր ինքնագնահատականը մի դեպքում կարող է նպաստել զոհի դերի, մյուս դեպքում՝ բռնարարքային վարքագծի ձևավորմանը՝ որպես փոխհատուցման տարբերակ:
- ***Բռնարարքի հանդեպ հակվածություն ունեցող երեխաներ:*** Կան մի շարք գործոններ, որոնք նպաստում են երեխաների մոտ բռնության դրսևորմանը: Բացահայտվել է, որ մայրական դեպրիվացիայի պայմաններում դաստիարակված երեխաները (ովքեր մանկական տարիքում բավականաչափ սեր, խնամք չեն տեսել՝ ”սոցիալական որբեր”, մանկատան երեխաներ) հետագայում ավելի հակված են եղել բռնության, քան նորմալ ընտանիքներում դաստիարակված երեխաները:

ԲՈՒԼԻՆԳԻ ՀԱՆԴԵՊ ՀԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐ: ԲՈՒԼԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՈՂ ԵՐԵԽԱՆԵՐ

Կան մի շարք գործոններ, որոնք նպաստում են երեխաների մոտ բուլինգի դրսևորմանը: Բացահայտվել է, որ մայրական դեպրիվացիայի պայմաններում դաստիարակված երեխաները (ովքեր մանկական տարիքում բավականաչափ սեր, խնամք չեն տեսել) հետագայում ավելի հակված են եղել բռնության, քան նորմալ ընտանիքներում դաստիարակված երեխաները:

Արտաքին գործոններ



Համաձայն Դ. Օլվեուսի՝ բուլլինգի հանդեպ ուժեղ հակում դրսևորվում է այն երեխաների մոտ, ովքեր սերում են հետևյալ տիպի ընտանիքներից:

- ***Ոչ լրիվ ընտանիքներ.*** միայնակ ծնողի կողմից դաստիարակվող երեխան ավելի շատ է հակված հասակակիցների նկատմամբ հուզական բռնություն կիրառելուն: Ընդ որում, ոչ

լրիվ ընտանիքներում մեծացած աղջիկներն առավել հաճախ են հուզական բռնություն կիրառում, քան տղաները:

- ***Ընտանիքներ, որտեղ մոր մոտ նկատվում է բացասական վերաբերմունք կյանքի նկատմամբ.*** այն մայրերը, ովքեր անվստահությամբ և բացասաբար են տրամադրված երեխայի "աշխարհին", որպես կանոն, չեն ցանկանում համագործակցել դպրոցի հետ: Նման մայրերը հակված են արդարացնել իրենց բռնությունը՝ համարելով այն "թշնամիներին" ուղղված բնական հակազդում: Իշխանատենչ և ավտորիտար ընտանիքներ.
- ***Գերհովանավորության պայմաններում դաստիարակվող երեխաներն անվերապահորեն ենթարկվում են ծնողների կամքին***, և դպրոցը դառնում է այն վայրը, որտեղ նրանք դուրս են հորդեցնում իրենց մեջ կուտակված ճնշվածությունը, զայրույթը և վախը:
- ***Ներընտանեկան կոնֆլիկտային հարաբերություններով ընտանիքներ.*** այն ընտանիքներում, որտեղ մեծահասակները հաճախ են վիճում երեխաների ներկայությամբ, աշխատում է այսպես կոչված "ուսուցման մոդելը": Երեխաները յուրացնում և հետագայում առօրյա կյանքում կիրառում են այդ մոդելը՝ որպես իրավիճակը հաղթահարելու միջոց: Այդպիսով, վարքի մի մոդելը կարող է փոխանցվել սերնդից սերունդ: Ընտանիքի ֆրուստրացնող և տագնապային մթնոլորտն ինքնին ստիպում է երեխային պաշտպանվել՝ դրսևորելով ագրեսիվ վարքագիծ: Նման ընտանիքներում սովորաբար բացակայում է փոխադարձ աջակցությունը: Այն ընտանիքների երեխաները, որտեղ բռնությունը պրակտիկ կիրառություն ունի, բռնության իրավիճակներն այլ կերպ են գնահատում և մեկնաբանում, քան մյուսները: Օրինակ՝ երեխան, ով սովոր է բռնություն պարունակող հաղորդակցմանը՝ հրամայող տոնին, բղավոցին, բռնարարքը դիտում է որպես նորմալ երևույթ: Հետևաբար, ուսուցչի կամ հասակակիցների ճիչերի, ծեծի կամ հարվածների մեջ նա ոչ մի վատ բան չի տեսնում:
- ***Բռնության նկատմամբ գենետիկական նախատրամադրվածությամբ ընտանիքներ.*** երեխաների մոտ գենետիկորեն տարբեր է սթրեսի հանդեպ տոլերանտությունը (հաղթահարելու ունակությունը): Սթրեսի հանդեպ ցածր տոլերանտություն ունեցող երեխաները նախատրամադրվածություն ունեն բռնի արարքներ կատարելու նկատմամբ: Ցածր առաջադիմությունը նույնպես բռնության դրսևորման ռիսկային գործոն է: Լավ գնահատականներն ուղղակիորեն կապված են բարձր ինքնագնահատականի հետ: Տղաների համար դպրոցական առաջադիմությունն այնքան էլ կարևոր չէ և ավելի քիչ է ներգործում ինքնագնահատականի վրա: Նրանց համար առավել կարևոր են հաջողությունները սպորտում, արտադպրոցական միջոցառումներում, արշավներում և այլն: Իսկ ահա ցածր առաջադիմություն ունեցող աղջիկների մոտ մեծ է հասակակիցների նկատմամբ ագրեսիայի դրսևորումների ռիսկը:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲՈՒԼԻՆԳԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Դպրոցական բուլինգը երեխաների վրա ներգործում է ուղիղ և միջնորդավորված կերպով:

Առաջին հերթին, խանգարվում են ընկերական հարաբերությունները՝ դպրոցական երկարատև ծաղրուծանակները ներգործում են երեխայի Ես-պատկերի վրա, իջնում է նրա ինքնագնահատականը: Երեխան սկսում է խուսափել մարդկանց հետ նոր հարաբերություններ կառուցելուց: Հաճախ պատահում է նաև հակառակը՝ մյուս երեխաները ևս խուսափում են բռնության զոհերի հետ ընկերություն անելուց. նրանք վախենում են, որ իրենք էլ զոհ կդառնան: Արդյունքում զոհի համար ընկերական հարաբերությունների ձևավորումը խնդրահարույց է դառնում, քանի որ դպրոցում մերժված լինելը հաճախ տարածվում է նաև սոցիալական հարաբերությունների այլ ոլորտների վրա: Չի բացառվում, որ նման երեխան հետագայում ապրի «անհաջողակի ծրագրավորմամբ»:

Երկրորդ, զոհը խմբում ցածր կարգավիճակ է ունենում, ինչը ուսման մեջ և վարքագծում պրոբլեմների պատճառ է հանդիսանում: Նման երեխաների մոտ բարձր է նյարդահոգեկան և վարքային խանգարումների զարգացման հավանականությունը: Դպրոցական բուլինգի զոհերին բնութագրական են ներոտիկ խանգարումները, ընկճախտը, քնի և ախորժակի խանգարումները. Վատթարագույն դեպքում կարող է ձևավորվել հետտրավմատիկ սթրեսային խանգարում:

Երրորդ, դեռահասների մոտ դպրոցական բուլինգն առաջացնում է նույնականության խանգարումներ: Երկարատև սթրեսը ծնում է հուսահատության և անելանելիության զգացում, ինչը կարող է սուիցիդային մտքերի պատճառ հանդիսանալ:

ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ԲՈՒԼԻՆԳԸ

Արևմուտքում, հատկապես՝ ԱՄՆ-ում, գոյություն ունեն բուլինգի դեմ պայքարելու հստակ մեխանիզմներ, առաջին հերթին՝ իրավական. երեխան, անկախ իր արտաքին տեսքից կամ զարգացման յուրահատկություններից, իրավունք ունի դպրոց գնալու և այնտեղ ապահով գտնվելու: Դպրոցներում տարվում է նաև հոգեթերապևտիկ աշխատանք հատկապես, բուլիինգի կանխարգելման նպատակով: Բուլիինգի կանխարգելման մեխանիզմները ևս բաժանվում են օրենսդրական և հոգեբանական լուծումների. բուլիինգի դեպքերը բարձրաձայնվում և պատժվում են, իսկ դպրոցներում գործում են տարատեսակ ծրագրեր՝ երեխաներին ապրումակցել և համագոյատևել սովորեցնելու համար:

Դպրոցի և մանկավարժության նպատակներից մեկն է երեխայի սոցիալականացման բարձրացումը՝ մասնավորապես, բուլիինգը կանխելու համար: Իհարկե, գոյություն ունեն կրթական համակարգեր, որոնցում կարգապահության կոշտ կանոնների շնորհիվ բուլիինգն ուղղակի տեղ չի գտնում, թեև այդ համակարգերն իրենց խնդիրներն ունեն: Սակայն, եթե երեխաներին ինքնահոսի թողնել, նրանք ինքնաբերաբար բաժանվում են հալածողների և

հալածվողների: Դրա պատճառն այն է, որ մինչև որոշակի տարիք երեխաները դժվարանում են ինքնուրույն տարբերակել լավն ու վատը և հիմնվում են արտաքին օրինակների վրա՝ արդյունքում ավելի հեշտ տրվելով սեփական բնազդային ազդակներին: Սրա հետևանքով, դպրոցներում բուլիինգը սովորաբար խմբակային բնույթ է կրում. ձևավորվում է հալածողների խումբ, որը թիրախավորում է մեկ կամ երկու երեխայի, իսկ մնացած երեխաները ստիպված միանում են հալածողներին, որ չհայտնվեն հալածվողների շարքում: Հայաստանում գոյություն ունի բուլինգի բավականին լուրջ խնդիր, սակայն դրա մասին ընդունված չէ խոսել նույնպես, ինչպես ընտանեկան կամ սեռական բռնության և այլ խնդիրների մասին: Սակայն, Հայաստանյան իրականությունը հատուկ լուծումների կարիք ունի: Ըստ 2015 թվականին արված հետազոտությունների՝ Հայաստանում տղա երեխաների շրջանում 52 %-ը ենթարկվում է բուլլինգի, այսինքն՝ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության (ծաղրանք, նվաստացում): Երեխաները շատ դեպքերում չեն գիտակցում, որ իրենց նկատմամբ կամ իրենց կողմից բուլլինգի դրսևորումները ոչ ցանկալի և սոցիալապես ոչ առողջ վարքագծի դրսևորումներ են: Իրենք շատ հաճախ համարում են դա նորմալ, զոհերը իրենք շատ հաճախ համարում են դա նորմա, և համարում են որ իրենք պետք է դիմանան, որ դա պարզապես օրինակ դպրոցի անխուսափելի դրսևորումներից մեկն է, որի միջով իրենք պետք է անցնեն մեծանան և դիմանան: Ոմանք դիմանում են իսկ ոմանք ոչ: Ոմանք մտնում են մեծ կյանք սարսափելի տրավմաներով, որոնք շատ դեպքերում չեն կարողանում հաղթահարել: Մեկ այլ կարևոր հանգամանքն այն է, որ գլոբալ խնդիր է սա իհարկե, որովհետև գլոբալ մակարդակում կա միտում աշխատելու բուլլինգի ենթարկված երեխայի հետ:

Խոսելով երեխաների հանդեպ կիրառվող բուլինգի բոլոր տեսակներից պաշտպանված լինելու իրավուքնի մասին, որը սահմանված է ինչպես կոնվենցիայով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք իրավական ակտերով, ընտանեկան օրենսգրքով և այլն, այդուհանդերձ բուլլինգ երևույթը անտեսված իրավական առումով, իրավական կարգավորումների առումով բավականին անտեսված է դեռ, և պատասխանատվությունն ու իրավական կարգավորումը այս մասով իսկապես վերանայելու և համադրվելու կարիք ունի: Այդ պատճառով ***շատ կարևոր է համարվում այս շրջանում ուսուցիչների և ծնողների դերը, քանի որ ծնողները և ուսուցիչները պարբերաբար լինելով երեխաների կողքին, պարտավորություն ունեն նաև համապատասխան միջոցներ ձեռնարկել, որպեսզի զերծ մնան երեխաները այսպիսի դրսևորումներից:***

Եթե ամեն ինչ վերահսկողությունից դուրս է եկել և ծնողը բաց է թողել պահը, բուլիինգը կրում է շարունակական բնույթ ու երեխան իրեն ապահով չի զգում դպրոցում, անհրաժեշտ է ծնողի միջամտությունը: Բուլիինգի դեպքում խոսքը պարբերաբար նվաստացումների ու անհավասար ուժերի պայմաններում ճնշումների մասին է: Երեխայի ապահովության համար պատասխանատու է ծնողը ու նրա պարտավորությունն է նման դեպքում միջամտել ու լուծել հարցը: Ցանկալի է, որ ծնողը կարողանա դպրոցի միջոցով կապվել բուլիինգի ենթարկող երեխաների ծողների հետ, դպրոցում հանդիպում կազմակերպվի և հարցը քննարկվի:

Ինչպե՞ս ծնողը կանխարգելի իր երեխայի հանդեպ իրականացվող բուլինգը

- Սովորեցնել երեխային ճիշտ հետևել անձնական հիգիենային:
- Զբաղվել երեխայի մարզավիճակով, բակում խաղերի, կամ որևէ սպորտի հաճախելու միջոցով:
- Աշխատել, որ երեխան իր ունակությունների սահմաններում պատրաստված ներկայանա դասերին:
- Խուսափել երեխայի ներկայությամբ ընտանեկան վեճերից: Նման մթնոլորտում մեծացող երեխան առավել ընկճված է լինում և ավելի հակված է դառնալ բուլիինգի զոհ կամ հակառակը, բուլիինգի ենթարկող՝ բուլեր:
- Ցույց տալ երեխային, որ նա սիրված է, Հաճախ երեխայի մոտ նշել իր դրական կողմերի մասին: Ինքնավստահ երեխաներին ավելի բարդ է հունից հանել, ստիպել, որ լաց լինեն, մեկուսանան, ճնշվեն, իսկ բուլիինգի ենթարկողին հենց դա է դուր գալիս, երբ իր “զոհը” ճնշվում է:
- Սովորեցնել երեխային ծիծաղել սեփական սխալների վրա: Եթե երեխան չի ընկճվում կատակներից, փոխարենը ինքն է սկսում ծիծաղել, նրան բուլիինգի ենթարկելը դառնում է անհետաքրքիր:
- Հաճախ հրավիրել դասարանի երեխաներին տուն կամ այլ հետաքրքիր վայր, այդ թվում բուլինգի ենթարկողներին: Ծնողը պիտի փորձի ընկերանալ այդ երեխաների հետ՝ նախապես իր երեխայի հետ համաձայնեցնելով դա, բացատրելով, որ դա անում է հենց երեխայի համար:
- Ցույց տալ մյուս երեխաներին իր երեխայի հետաքրքիր կողմերը, օրինակ, եթե երեխան լավ նկարում է, հրավիրի իրենց տուն միասին յուղաներկերով նկարելու.....

Այսպիսով՝ դպրոցի կրթական միջավայրի առանցքային հոգեբանական բնութագիրն անվտանգությունն է: Դպրոցում հոգեբանական անվտանգ միջավայր ասելով հասկանում ենք փոխազդեցության այն միջավայրը, որն ազատ է հոգեբանական բռնության դրսևորումներից և ռեֆերենտային նշանակություն ունի աշակերտների համար: Այնտեղ գերակշռում է հումանիստական կողմնորոշումը (կարևորվում են և՛ սեփական, և՛ ուրիշների հետաքրքրությունները): Հոգեբանորեն անվտանգ կրթական միջավայրը դպրոցականների դրական անձնային աճի կարևորագույն պայման է, որը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ պաշտպանել յուրաքանչյուր աշակերտի անձը, քիչ պաշտպանվածին լրացուցիչ աջակցություն ցուցաբերել՝ զարգացնելով և իրացնելով նրա անհատական պոտենցիալը:

Եզրակացություն

Ժամանակակից պայմաններում ուսուցման գործընթացում երխաների հավասար իրավունքների պայմանների ապահովման խնդիրը արդիական է և ժամանակի պահանջ: Հետազոտական աշխատանքում անդրադարձել եմ կրթության համակարգում դեռահաս աշակերտների նկատմամբ բռնության երևույթին, նրանց սոցիալական արդարության և սոցիալական պաշտպանության հիմնախնդրին, դրսևորման պատճառներին: Նշյալ խնդիրն ունի իր անվանումը՝ բուլլինգ, որը Հայաստանի Հանրապետությունում դեռևս խորությամբ ուսումնասիրված չէ և խոչընդոտում է երեխայի սոցիալականացման գործընթացը: Այս տեսանկյունից աշխատանքում քննարկվող բուլլինգի երևույթը մեր իրականության մեջ նորություն չէ, պարզապես մեր օրերում ստացել է նոր որակ ու հնչեղություն: Բուլլինգը թիրախավորված ճնշման ձև է, որը բացասաբար է ազդում երեխայի զարգացման վրա: Այն կարող է տեղի ունենալ ցանկացած խմբում, սակայն առավել վտանգավոր է դեռահաս-դպրոցականների շրջանում: Դրսևորումներն ու շարժառիթները տարբեր են, սակայն հետևանքները նույնն են. խեղվում է բուլլինգի ենթարկված երեխայի անձի ձևավորման և սոցիալականացման գործընթացը: Հայաստանում դեռևս չկա համապատասխան օրենսդրություն խնդրի կարգավորման գործում: Ավելին, բուլլինգը հաճախ չի դիտարկվում որպես խնդիր, այլ համարվում է բնականոն, նորմալ երևույթ՝ կապվելով դեռահասության տարիքի ճգնաժամի և հույզերը չկառավարելու հետ: Ուստի աշխատանքում առաջարկվում է ոչ միայն խնդրի համապարփակ ուսումնասիրություն, այլև համապատասխան օրենսդրության ապահովում և մի շարք երկրների փորձի ուսումնասիրություն, լավագույն մոտեցումների կիրառում:

Վերոնշյալ բացասական երևույթը, ագրեսիան կանխարգելելու գործում մեծ դեր ունեն ուսուցիչները, ինչպես նաև ծնող-ուսուցիչ հարաբերությունները: Ուսուցչի վճռական դերն այն է, որ վստահության վրա հիմնված հարաբերություններ ստեղծի բոլոր աշակերտների հետ, նրանց պահվածքում նկատելի բացասական դրսևորումների առկայության դեպքում նրբանկատորեն հատուկ քայլեր ձեռնարկի իրավիճակը շտկելու համար: Ոչ պակաս կարևոր է նաև սովորողների ինքնագնահատականը, որն ուղեկցվում է հետևյալ ցուցանիշներով.

- ✓ սեփական հնարավորությունների ու կարողությունների իրատեսական ընկալում՝ առանց գերագնահատման և թերագնահատման,
- ✓ սեփական անձի հանդեպ որոշակի վստահության ձեռքբերում,
- ✓ ձգտումների ու նպատակին հասնելու քայլերի կանխատեսում, իրականացման հնարավորությունների իրատեսական ընկալում և այլն:

Այսպիսով՝ երեխաների սոցիալական պաշտպանության և արդարության հիմնախնդիրը արդիական է բոլոր ժամանակներում, որը հնարավորություն կտա բոլոր երեխաներին մասնակցելու սոցիալական կյանքին որպես արժանի, հարգված և իրենց ներդրումն ունեցած անձանց: Թեպետ Հայաստանի Հանրապետությունում դեռևս խնդրին օրենսդրական լուծում

տրված չէ, բայց, միևնույն է, հասարակությունը մերժողական վերաբերմունք ունի երևույթի նկատմամբ։ Ուստի ժամանակակից դպրոցի առանցքային խնդիրներից մեկը ոչ միայն կրթության բարձր որակ ապահովելն է, այլև գիտակից ու հանդուրժող այնպիսի քաղաքացի պատրաստելը, որը հարգում է ուրիշի իրավունքներն ու ընկերոջն ընդունում այնպիսին, ինչպիսին նա կա։

Բոնությունն անմոռանալի դաս է, դաս, որ ոչ մի երեխա չպետք է սովորի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зиновьева Н.О., Михайлова Н.Ф. Психология и психотерапия насилия. Ребенок в кризисной ситуации. – СПб.: Речь. 2005.
2. Малкина-Пых И.Г. Психология поведения жертвы. - М.: Изд-во Эксмо, 2006.:
3. Фурманов И.А. Агрессия и насилие: Диагностика, профилактика и коррекция. – СПб.: Речь, 2007.
4. Olweus D. Low School Achievement asd Aggressive Behaviour in Adolescent Boys //Magnusson D., Allen V. (Eds.). Human Development. An interactional Perspective. New York: Academic Press, 1983.